ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02.02.2022 *Ք. Իջևան*

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում 2021-2022 ուստարվա II կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: /Զեկ.՝ Կ. Պողոսյան/
2. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. 2021-22 ուստարվա I կիսամյակի ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
4. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում: /Զեկ.՝ ամբիոնի վարիչներ/
5. 1-ին կիսամյակի պրակտիկաների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում և 2-րդ կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդում: /Զեկ.՝ Լ. Բեգինյան/
6. Ընթացիկ հարցեր

Լ.ՄԵՅԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ուշադրություն դարձրեց ֆակուլտետի դասախոսների 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական բեռնվածություններին: Նշեց, որ թափուր դասաժամեր չկան:

Դեկանը նշեց, որ ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի ութին: Արդեն պատրաստ են երկրորդ կիսամյակի դասատախտակները, ձմեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները: Կ. Պողոսյանը ամբիոնների վարիչներին ևս մեկ անգամ հորդորեց վերջնական տեսքի բերել երկրորդ

կիսամյակի առարկայական փաթեթները, հարցաշարերը: Զեկուցողը նշեց, որ ուսումնական գործընթացը հիմնականում կիրականացվի մասնաճյուղում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-22 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Կ. Պողոսյանը փաստեց, որ ֆակուլտետում ավելացել է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, և նրանց պետք է խրախուսել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանողուհի Նունե Օնիկի Քոչարյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, վեց կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի և նպատակահարմար է Նունե Քոչարյանին առաջադրել որպես «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Է. Թեմրազյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանողուհի Էդիտա Վերվիկի

Գրիգորյանին: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, վեց կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Էդիտա Գրիգորյանին առաջադրել որպես «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատուն ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ առանձնացրեց նաև 3-րդ կուրսի ուսանողուհի Նելլի Գրիգորի Դավթյանին: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Նելլի Դավթյանին առաջադրել որպես «Իջևան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Է. Թեմրազյանը ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ առանձնացրեց նաև 3-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Խաժակի Սարդարյանին: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Սյուզաննա Սարդարյանին առաջադրել որպես «Շիրակ Գասպարյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Մարդանյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 3-րդ կուրսի ուսանողուհի Լուսյա Արամի Շախպարյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Լուսյա Շախպարյանին առաջադրել որպես «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Լ. Թումանյանն առանձնացրեց նաև «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Եսայիի Խաչատրյանին: Վերջինս չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Անուշ Խաչատրյանին ներկայացնել որպես «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Դեկանը «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողներից առանձնացրեց «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Մերի Կամոյի Եգանյանին: Զեկուցողը նշեց, որ վերջինս հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Զեկուցողը առաջարկեց Մերի Եգանյանին ներկայացնել որպես «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսից առանձնացվեց նաև Սյուզաննա Արթուրի Մովսիսյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Սյուզաննա Մովսիսյանին առաջադրել որպես «Արտակ Յուցուլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Նունե Քոչարյանին որպես «Մխիթար Գոշ», Էդիտա Գրիգորյանին՝ «Շառլ Ազնավուր», Անուշ Խաչատրյանին՝ «Գրիգոր Նարեկացի», Լուսյա Շախպարյանին՝ «ԵՊՀ», Մերի Եգանյանին՝ «Դավիթ Անհաղթ», Սյուզաննա Մովսիսյանին՝ «Արտակ Յուցուլյան», Սյուզաննա Սարդարյանին՝ «Շիրակ Գասպարյան» և Նելլի Դավթյանին՝ «Իջևան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Նշվեց, որ քննաշրջանն իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն:

‹‹Պատմություն›› կրթական ծրագրի I կուրսի 8 ուսանողներից բոլոր առարկաներից ‹‹գերազանց›› և ‹‹լավ›› գնահատական ստացել է 1 ուսանող, «խառը» գնահատական՝ 1 ուսանող և անբավարար գնահատական՝ 2 ուսանող:

‹‹Պատմություն›› մասնագիտության II կուրսի 14 ուսանողներից բոլոր առարկաներից ‹‹գերազանց›› և ‹‹լավ›› գնահատական ստացել է 3 ուսանող, խառը գնահատական՝ 6 ուսանող և անբավարար գնահատական՝ 9 ուսանող:

‹‹Պատմություն›› մասնագիտության III կուրսի 7 ուսանողներից բոլոր առարկաներից միայն ‹‹գերազանց›› և ‹‹լավ›› գնահատական ստացել է 2 ուսանող, «խառը» գնահատական՝ 3 ուսանող և անբավարար գնահատական՝ 5 ուսանող:

‹‹Պատմություն›› մասնագիտության IV կուրսի 7 ուսանողներից բոլոր առարկաներից միայն ‹‹գերազանց›› և ‹‹լավ›› գնահատական՝ 3 ուսանող, «խառը» գնահատական՝ 4 ուսանող և անբավարար գնահատական՝ 0 ուսանող:

Ամբողջացնելով ընդհանուր քննաշրջանի պատկերը՝ ստացվում է հետևյալը. ‹‹Պատմություն›› մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 25,00%, II կուրսի առաջադիմությունը՝ 64,29%, III կուրսի առաջադիմությունը՝ 71,43%, իսկ IV կուրսի առաջադիմությունը՝ 100%:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողները /14 ուսանող/ քննություններ են հանձնել 3 առարկայից /«Հայ ժողովրդի բանահյուսություն», «Խոսքային էթիկետ և խոսքային հաղորդակցման հիմունքներ» և «Գրականագիտության ներածություն»/: «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկայից գերազանց գնահատականներ ստացել են 3 ուսանող, 6 ուսանող՝ լավ, 5 ուսանող՝ բավարար: «Խոսքային էթիկետ և խոսքային հաղորդակցման հիմունքներ» առարկայից գերազանց ստացել են 4 ուսանող, 7 ուսանող՝ լավ, 3 ուսանող՝ բավարար: «Գրականագիտության ներածություն» առարկայից գերազանց ստացել են 4 ուսանող, 3 ուսանող՝ լավ, 4 ուսանող՝ բավարար և 3 ուսանող՝ անբավարար:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողները /15 ուսանող/ քննություններ են հանձնել 3 առարկայից /«Բարբառագիտության հիմունքներ», «19-րդ դարի հայ գրականության պատմություն-1» և «Լեզվական վերլուծության հիմունքներ»/: «Բարբառագիտության հիմունքներ» առարկայից գերազանց գրահատականներ ստացել են 2 ուսանող, 5 ուսանող՝ լավ, 7 ուսանող՝ բավարար և 1 ուսանող՝ անբավարար: «19-րդ դարի հայ գրականության պատմություն-1» առարկայից գերազանց ստացել են 2 ուսանող, 5 ուսանող՝ լավ, 7 ուսանող՝ բավարար, 1 ուսանող՝ անբավարար: «Լեզվական վերլուծության

հիմունքներ» առարկայից գերազանց ստացել են 7 ուսանող, 5 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար և 1 ուսանող՝ անբավարար:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները / 8 ուսանող/ քննություններ են հանձնել 4 առարկայից /«Արևմտահայերեն», «19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն», «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1» և «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն-1»/: «Արևմտահայերեն» առարկայից գերազանց գնահատականներ ստացել են 2 ուսանող, 3 ուսանող՝ լավ, 3 ուսանող՝ բավարար: «19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն» առարկայից գերազանց ստացել են 3 ուսանող, 3 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար: «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1» առարկայից գերազանց ստացել են 3 ուսանող, 1 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար և 2 ուսանող՝ անբավարար: «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն-1» առարկայից գերազանց ստացել են 3 ուսանող, 4 ուսանող՝ լավ, 1 ուսանող՝ բավարար:

Ամփոփելով ձմեռային քննաշրջանի արդյունքները՝ նշվեց, որ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին կիսամյակի ընդհանուր քննաշրջանի առաջադիմության արդյունքը կազմում է 78.38% /1-ին կուրս՝ 78.57%, 2-րդ կուրս՝ 80.00% և 3-րդ կուրս՝ 75.00%/:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրում ևս քննաշրջանն անց է կացվել ըստ նախապես կազմված գրաֆիկի, նախօրոք ամբիոն են ներկայացվել քննական թեստերն ու տոմսերը, որոնք քննարկվել, հավանության են արժանացել և հաստատվել ամբիոնի կողմից: Այնուհետև մանրամասն ներկայացվեցին քննությունների արդյունքները, համաձայն որի՝ ընթացիկ քննություններից ‹‹Ընդհանուր մանկավարժություն›› մասնագիտության **առաջին կուրսի** 18 ուսանողից ‹‹Մաթեմ.-1›› առարկայից 1 ուսանող ստացել է 17 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 3 ուսանող՝ 12 միավոր, 5՝ ուսանող 11 միավոր, 3 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր: ‹‹Հայոց լեզու և գրակ.›› առարկայից 2 ուսանող ստացել է 19 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 2 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15, 2 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 11 միավոր, 2 ուսանող՝ 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր: ‹‹Հոգեբան.

հիմունքներ›› առարկայից 2 ուսանող՝ 18 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 2 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 3 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 4 ուսանող՝ 9 միավոր։ ‹‹Մանկ. հիմունքներ›› առարկայից 1 ուսանող՝ 19 միավոր, 3 ուսանող՝ 17 միավոր, 2 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 4 ուսանող՝ 12 միավոր, 2 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր։

Երկրորդ կուրսի 22 ուսանողից ‹‹Շախմատի տես. և պրակտիկա›› առարկայից 2 ուսանող ստացել է 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 5 ուսանող՝ 17 միավոր, 2 ուսանող՝ 16 միավոր, 3 ուսանող՝ 15 միավոր, 6 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 2 ուսանող՝ 12 միավոր, ‹‹Տարիքային հոգեբան.›› առարկայից 4 ուսանող՝ 18 միավոր, 5 ուսանող՝ 17 միավոր, 4 ուսանող՝ 16 միավոր, 3 ուսանող՝ 15 միավոր, 5 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր։ «Երաժշտություն» առարկայից 5 ուսանող ստացել է 20 միավոր, 4 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 3 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, «Մայրենի լեզու-1» առարկայից 1 ուսանող ստացել է 18 միավոր, 3 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 12 միավոր, 3 ուսանող՝ 11 միավոր, 3 ուսանող՝ 10 միավոր, 4 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր։ «Թվաբանության հիմունքներ» առարկայից 2 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 2 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 3 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 2 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 4 ուսանող՝ 8 միավոր։ «Մանկավ. պատմ.» առարկայից 1 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 5 ուսանող՝ 17 միավոր, 3 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 3 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր։

Երրորդ կուրսի 10 ուսանողից ‹‹Մայրենի լեզու-3›› առարկայից 1 ուսանող ստացել է 18 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 2 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր։ «Տեխնոլոգիա» առարկայից 1 ուսանող ստացել է 20 միավոր, 1

ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 3 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 2 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 12 միավոր։ «Մաթեմ. դաս. մեթոդ.» առարկայից 1 ուսանող ստացել է 20 միավոր, 1ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 3 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր։

Չորրորդ կուրսի 19 ուսանողից «Մաթեմատիկա-7» առարկայից 1 ուսանող ստացել է 19 միավոր, 3 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 3 ուսանող՝ 13 միավոր, 5 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր։ «Մայրենի լեզու-7» առարկայից 5 ուսանող՝ 20 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 2 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 3 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող՝ չներկայացված։ «Մանկական գրականություն» առարկայից 4 ուսանող ստացել է 20 միավոր, 1 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 5 ուսանող՝ 12 միավոր, 2 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ չի ներկայացել։ «Կայուն զարգ. հիմն.» առարկայից 3 ուսանող ստացել է 20 միավոր, 3 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 2 ուսանող՝ 16 միավոր, 3 ուսանող՝ 15 միավոր, 3 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր։ «Գրականագիտ. հիմունքներ» առարկայից 2 ուսանող ստացել է 18 միավոր, 2 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 2 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 11 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 6 ուսանող՝ 8 միավոր։ «Մեդիակրթություն» առարկայից 3 ուսանող ստացել է 20 միավոր, 2 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 3 ուսանող՝ 17 միավոր, 6 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր։ «Երեխայի իրավունք. և եր. իրավ. պաշտպան.» առարկայից 4 ուսանող ստացել է 20 միավոր, 4 ուսանող՝ 19 միավոր, 7 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող չի ներկայացել։

Քննաշրջանի արդյունքներն ունեն հետևյալ տեսքը՝

Հոգեբանություն—32 ուսանող

1-ին կուրս բաց. առաջադիմ.--- 69,23%

2-րդ կուրս բաց. առաջադիմ.--- 91,67%

3-րդ կուրս բաց. առաջադիմ.--- 85,71%

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա – 68 ուսանող

1-ին կուրս բաց. առաջադիմ.--- 88,89%

2-րդ կուրս բաց. առաջադիմ.--- 86,36%

3-րդ կուրս բաց. առաջադիմ. --- 90,00%

4-րդ կուրս բաց. առաջադիմ. --- 83,33%

‹‹Հոգեբանություն›› կրթական ծրագրի ընթացիկ քննություններին երկրորդ կուրսի 12 ուսանողից ‹‹Անձի հոգեբանություն›› առարկայից 2 ուսանող ստացել է 13 միավոր, 3 ուսանող՝ 15 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 3 ուսանող՝ 19 միավոր, 2 ուսանող՝ 20 միավոր։ «Կրթության հոգեբանություն» առարկայից 12 ուսանողից 4 ուսանող՝ 18 միավոր, 3 ուսանող՝ 19 միավոր, 5 ուսանող՝ 20 միավոր։ Երրորդ կուրսի 7 ուսանողից «Քաղաքական հոգեբանություն» առարկայից 7 ուսանող ՝ 20 միավոր, «Ռազմական հոգեբանություն» առարկայից 7 ուսանողից 3 ուսանող ՝19 միավոր, 4 ուսանող՝ 20 միավոր։ 1-ին կուրսի ուսանողից 13 ուսանող «Հոգեբանության հիմունքներ» առարկայից 2 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ չներկայացված, 1 ուսանող՝ 12 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 4 ուսանող՝ 19 միավոր։ «ԿՆՀ մորֆ. և ԲՆԳ ֆիզ.» առարկայից 13 ուսանողից 1 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ չներկայացված, 2 ուսանող՝ 8 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր։ Երկրորդ կուրսի 12 ուսանողից «Հոգեֆիզոլոգիա» առարկայից 12 ուսանողից 2 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 3 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝18 միավոր, 3 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 20 միավոր։ «Անձի տեսություն» առարկայից 12 ուսանողից 3 ուսանող ստացել է 8 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 1 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 3 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 20 միավոր։ «Սոցիալական հոգեբանություն» առարկայից 12 ուսանողից 1-ը ստացել է 10 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 3 ուսանող՝ 19 միավոր, 4 ուսանող՝ 20 միավոր։ «Հոգեբան. խորհրդ. և պրակտ.» առարկայից 7 ուսանողից 3 ուսանող ստացել է 19 միավոր, 2 ուսանող՝ 18 միավոր, 2 ուսանող՝ 20 միավոր։ «Հոգեախտորոշում» առարկայից 4 ուսանող ստացել է 17 միավոր, 2 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր։ «Զարգացման

հոգեբանություն» առարկայից 3 ուսանող ստացել է 15 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝17 միավոր, 2 ուսանող՝ 18 միավոր:

Օտար լեզու և գրականություն մասնագիտության «Անգլերեն լեզու և գրականություն» 1-ին կուրսում 30 ուսանողից «Ֆրանսերեն-1» առարկայից 11 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 10 -ը՝ լավ, 4-ը՝ բավարար, 4-ը՝ անբավարար, չներկայացած՝ մեկ ուսանող: «Անգլերեն-1» առարկայից 4 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 10 -ը՝ լավ, 15-ը՝ բավարար, 1-ը՝ անբավարար: «Անգլերեն լեզու և գրականություն» 2-րդ կուրսում 19 ուսանողից «Անգլերեն-3» առարկայից 6 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 2 -ը՝ լավ, 10-ը՝ բավարար, 1-ը՝ անբավարար, «Ֆրանսերեն-3» առարկայից 8 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 1 -ը՝ լավ, 5-ը՝ բավարար, 5-ը՝ անբավարար: «Հայ գրականություն» առարկայից 6 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 4-ը՝ լավ, 4-ը՝ բավարար, 5-ը՝ անբավարար: «Ռուս գրականության պատմություն» առարկայից 11 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 4-ը՝ լավ, 4-ը՝ բավարար: «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսում 24 ուսանողից «Անգլերեն-5» առարկայից 6 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 7 -ը՝ լավ, 7-ը՝ բավարար, 2-ը՝ անբավարար, չներկայացած՝ 2 ուսանող: «Ֆրանսերեն-5» առարկայից 5 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 8 -ը՝ լավ, 6-ը՝ բավարար, 3-ը՝ անբավարար, չներկայացած՝ 2 ուսանող: Կամընտրական առարկաներից «Բիզնես անգլերեն» առարկայից 6 ուսանողից 2-ը՝ գերազանց, 1-ը՝ լավ, 3-ը՝ բավարար, «Զանգվածային լրատվության լեզուն անգլերենում» առարկայից 8 ուսանողից 3-ը՝ լավ, 2-ը՝ բավարար, չներկայացած՝ 4 ուսանող: «Հաղորդակցական հմտություններ» առարկայից 18 ուսանողից 10-ը՝ գերազանց, 8-ը՝ լավ, «Տիպաբանություն» առարկայից 4 ուսանողից 3-ը՝ գերազանց, 1-ը՝ լավ:

«Օտար լեզու և գրականություն» 4-րդ կուրսում 10 ուսանողից «Անգլերեն-7» առարկայից 3 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 4 -ը՝ լավ, 3-ը՝ բավարար: «Ֆրանսերեն-7» առարկայից 5 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 4 -ը՝ լավ, 3-ը՝ բավարար: Կամընտրական առարկաներից «Գեղարվեստական տեքստերի թարգմանությունն անգլերենում» առարկայից 7 ուսանողից 4-ը ստացել է գերազանց գնահատական, 3 -ը՝ լավ, «Դասավանդման ժամանակակից մեթոդներն անգլերենում» առարկայից 6 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 1 -ը՝ լավ,

«Գեղարվեստական տեքստերի թարգմանությունը ֆրանսերենում» առարկայից 10 ուսանողից 7-ը ստացել է գերազանց գնահատական, 3 -ը՝ լավ, «Թարգմանության տեսություն և պրակտիկա» առարկայից 3 ուսանողից 2-ը ստացել է գերազանց գնահատական, 1 -ը՝ բավարար:

Մասնագիտական մանկավարժություն մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» 1-ին կուրսում 15 ուսանողից «Մանկավարժության գործունեության հիմունքներ» առարկայից 11 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 3-ը՝ լավ, չներկայացած 1 ուսանող: «Ռուսաց լեզու և գրականություն» 2-րդ կուրսում 6 ուսանողից «Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն-1» առարկայից 1 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 1-ը՝ լավ, 4-ը բավարար: «Տարրական կրթության մանկավարժություն» առարկայից 1 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 2-ը՝ լավ, 3-ը բավարար: «Ռուսաց լեզու և գրականություն» 3-րդ կուրսում 3 ուսանողից «Ռուս հատկանունաբանություն» առարկայից 2 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 1-ը՝ լավ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-22 ուստարվա I կիսամյակի ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ I կիսամյակում ունեցել են հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացներ: Գիտահետազոտական աշխատանքների թեմաները ամբիոններ են ներկայացվել 2021-2022 ուսումնական տարվա սկզբին: Ուսանողները նախօրոք ծանոթացել, ընտրել և սկսել են աշխատանքները: Ողջ կիսամյակի ընթացքում պարբերաբար անդրադարձ է եղել հետազոտական աշխատանքների

թեմաներին, և դրանք քննարկվել են թե՛ դասերի ընթացքում /եթե համընկել են ծրագրով նախատեսված նյութի հետ/ և թե՛ դասերից դուրս՝ ZOOM հարթակում կազմակերպված հանդիպումների ժամանակ: Կարևորելով հարցը՝ ամբիոններում քննարկվել են հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաները, դրանք ղեկավարած դասախոսները ներկայացրել են համապատասխան հաշվետվություններ:

Զեկուցողներն ընդհանուր առմամբ կարևորեցին հետազոտական բաղադրիչը՝ որպես շատ անհրաժեշտ, ինքնուրույն, ստեղծագործական և հետաքրքիր աշխատանք, որն անհրաժեշտություն է ուսանողի համար:

Զեկուցողները նշեցին, որ ուսանողները պատասխանատվության բարձր զգացումով են մոտեցել հետազոտական աշխատանքներին, և ներկայացվել են լավ աշխատանքներ: Աշխատանքի ընթացքում փորձ է արվել նոր մոտեցումներ ցուցաբերել դասընթացներին, որպեսզի ուսանողները հստակ պատկերացնեն իրենց կատարելիք աշխատանքի նպատակը, խնդիրները և արդիականությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը: Վերջինս նշեց, որ աշխատանքի ընթացքում ի հայտ են եկել որոշակի դժվարություններ: Աշխատանքը իրականացվում էր դասաժամերի հետ զուգընթաց: Քանի որ ծրագիրն ավարտվում է կիսամյակի վերջում, ապա հնարավորություն չի ընձեռնվում ստուգելու ուսանողների յուրացրածը առաջին ընթացիկից հետո: Հետազոտական աշխատանքի համար որոշակի խոչընդոտ է ուսանողների՝ գիտական ուսումնասիրություն կատարելու գիտելիքների պակասը, որը հավանաբար պետք է լրացվի ավելի ցածր կուրսերում (ինչպես օգտվել գիտական գրականությունից, հղումներ կատարել, ինչ բաղադրիչներից պետք է կազմված լինի, ինչպես շարադրել և այլն), ինչպես նաև ուսանողների թվաքանակը (մեծ թվով ուսանողների հետ լուրջ հետազոտություն ծավալելու անհնարինությունը):

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց պրակտիկայի բաժնի վարիչ Լ. Բեգինյանը։ Նա նշեց, որ II կիսամյակում անցկացվելիք պրակտիկաները բաշխված են, ղեկավարները ամբիոններ են ներկայացրել պրակտիկաների ծրագրերը, հստակեցված են անցկացման վայրերը և թեմատիկան։ Այնուհետև զեկուցողը անդրադարձավ I կիսամյակում իրականացված պրակտիկաներին։

Նշվեց, որ պրակտիկաները կազմակերպվել են նախապես բաժին ներկայացված ծրագրերով, առկա եղանակով՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները, համավարակի տարածվածությամբ պայմանավորված՝ նաև առկա և առցանց ձևերի համադրմամբ։

Արտադրական (մանկավարժական) պրակտիկաները

ուսուցում	կուրս	կրթական ծրագիր	ղեկավար	մասն.
առկա	3-րդ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա /մոդուլ-1	Ա.Պետրոսյան	10
		Ռուսաց լեզու և գրականություն /մոդուլ-1		3
	4-րդ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա /մոդուլ-3	Լ.Ավանեսյան	18
	4-րդ	Մանկավարժի լրացուցիչ որակավորում	Ա.Ղազարյան	22
հեռակա	4-րդ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա /մոդուլ-1	Ա.Պետրոսյան	15
	5-րդ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա /մոդուլ-4	Մ.Բարսեղյան	26
	2-րդ	Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Մագիստ. թեզի ղեկավարներ	24

Արտադրական (մանկավարժական) պրակտիկաները կազմակերպվել են պայմանագրային երկու դպրոցներում (Իջևանի թիվ 1 հիմնական դպրոց, Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց)։ Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցում մեկ շաբաթ անց գործընթացը դադարեցվել է ուսուցիչների և պրակտիկանտ ուսանողների մոտ համավարակ լինելու պատճառով։ Խնդիրը լուծվել է առցանց եղանակի, ապա նաև Իջևանի թիվ 1

հիմնական դպրոցում այն վերակազմակերպելու ճանապարհով: Դպրոցն աջակցել է մասնաճյուղի ուսանողներին, մանկավարժական կարողություններ ձևավորելու, հմտություններ ձեռք բերելու գործում: Ընթացքին իրազեկ լինելու համար բաժնի կողմից իրականացվել են վերահսկողական աշխատանքներ՝ դպրոց կատարվող այցելությունների միջոցով:

Պրակտիկայի վայրում ուսանողների կողմից ձեռք բերված գործնական գիտելիքներն ու կատարած աշխատանքներն արտահայտվել են թղթապանակներում, որոնք ներկայացվել և քննարկվել են ստուգարքին: Մանկավարժական պրակտիկայից բոլոր ուսանողները ստացել են «ստուգված»: Ըստ պայմանագրի՝ մասնաճյուղի կողմից դպրոցին կատարվել է վճարում:

Պրակտիկայի ավարտին պրակտիկայի բաժնի կողմից մշակված հարցաթերթիկների միջոցով կատարվել է արտաքին շահակիցների հարցում: Հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների համար: Գնահատվել է ուսանողների **94%-ը**:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի 1-ին կիսամյակի արդյունքներով ուսանողների վերջնական ՄՈԳ-ի միջին գնահատականը կազմել է **14.1**, իսկ արտաքին շահակիցների գնահատման միջինը՝ **4.5**:





ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը,
2. տիրապետելը ժամանակակից մեթոդներին,
3. պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ,
4. խմբային աշխատանքներ կազմակերպելու կարողությունը,
5. սեփական կարծիքը հայտնելու համարձակությունը,
6. ստեղծագործական մոտեցումը,
7. երեխաների հետ շփվելու կարողությունը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

- անընդհատ կատարելագործել մասնագիտական գիտելիքները,
- զբաղվել ինքնակրթությամբ,
- լսել փորձառու ուսուցիչների խորհուրդները:

Մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 4.7:

Ուսումնական

ուսուցում	կուրս	կրթական ծրագիր	ղեկավար	մասն.
հեռակա	4-րդ	Պատմություն	Ա.Մկրտումյան	10

Ուսումնական պրակտիկան նախատեսված էր դեկտեմբերի 14-ից դեկտեմբերի 25-ը՝ 40 ժամ տևողությամբ անցկացնել ուսումնական պրակտիկա հեռակա ուսուցման «Պատմություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողներ համար: Պրակտիկան կազմակերպվել է համակցված՝ առկա և առցանց (Zoom) տարբերակներով 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում՝ երկու շաբաթ տևողությամբ: Պրակտիկային մասնակցել է 10 ուսանող:

Ուսումնական պրակտիկան հիմնականում իրականացվել է *Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն, Հայոց պատմություն-1, 2, 3, 4 դասընթացների շրջանակներում*: Պրակտիկայի հիմնական նպատակն ու խնդիրներն են եղել ուսանողներին հնարավորություն ընձեռել ակադեմիական ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները կիրառել գործնականում՝ աշխատանքային միջավայրում, ամբողջացնել ակադեմիական գիտելիքները և մասնագիտական հմտությունները, ընդլայնել ու զարգացնել մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողություններ վերոնշյալ դասընթացների շրջանակներում:

Ուսումնասիրել և ներկայացել են ՀՀ մարզերի և Արցախի Հանրապետության հնագիտական և պատմամշակութային հուշարձանները, հավաքագրել, համակարգել, վերլուծել են ուսումնական պրակտիկայի ընթացքում նախատեսված պատմամշակութային վայրերի մասին տեղեկությունները, ծանոթացել են դրանց առանձնահատկություններին, կատարել են խմբային, անհատական, կազմակերպչական աշխատանքներ: Պրակտիկայի ընթացքում ուսանողներն

ամբողջացրել են իրենց գիտելիքները նախօրոք հանձնարարված թեմաների վերաբերյալ:

Պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ հանդիպել ենք շաբաթական 5 օր, ընդհանուր գործընթացը վերահսկվել է Մինչհամալսարանական կրթության և պրակտիկաների կազմակերպման բաժին կողմից:

Պրակտիկան անց է կացվել հետաքրքիր և արդյունավետ: Յուրաքանչյուր օր ուսանողները ներկայացրել են նախօրոք հանձնարարված և իրենց կողմից ընտրված թեմաները:

Ստուգարքի համար ուսանողներին հանձնարարվել է ընտրված թեմաների վերաբերյալ ներկայացնել ռեֆերատներ և պրեզենտացիաներ (ցուցադրություն):

10 ուսանողից 8-ը ստացել է ստուգված, իսկ 2 ուսանող չի ներկայացրել:

Պրակտիկայի ավարտին ուսանողների օրագրերը ներկայացվել են Մինչհամալսարանական կրթության և պրակտիկաների կազմակերպման բաժին:

Ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփմամբ ստուգարքին չեն ներկայացել 2 ուսանող, մնացած բոլոր ուսանողները ստացել են «ստուգված»:

Մասնագիտական պրակտիկա

ուսուցում	կուրս	կրթական ծրագիր	ղեկավար	մասն.
առկա	3-րդ	Հոգեբանություն	Ա.Մարտիրոսյան	7
հեռակա	5-րդ	Հոգեբանություն	Ա.Քամալյան	15

Մասնագիտական պրակտիկաները առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսում կազմակերպվել են խմբային եղանակով («Հույսի կամուրջ» ՀԿ, ԵՊՀ ԻՄ), մյուս կուրսում պրակտիկաները կազմակերպվել են տարբեր հիմնարկություններում՝ համաձայն պրակտիկայի ղեկավարի կողմից պրակտիկայի բաժին ներկայացված հաստատությունների ցանկի: Դրանք ընդգրկել են համայնքապետարաններ, մարզպետարան, տարբեր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, դպրոցներ, մանկապարտեզներ, առողջության կենտրոն և այլն: Պրակտիկայի ղեկավարներն իրենց աշխատանքները կազմակերպել են առկա և առցանց եղանակներով:

Պրակտիկայի ժամանակահատվածում ծրագրային պահանջներին համապատասխան կատարած աշխատանքները ուսանողները ներկայացրել են

սահմանված ժամկետներում և ստուգարքը ստացել «ստուգված»: Հաշվետվությունները ներկայացվել են բուհի կողմից սահմանված ձևաչափով (պրակտիկայի օրագրեր) և ամբիոնի կողմից առաջադրված պահանջով (բաց հաշվետվություն):

Պրակտիկայի ավարտին կատարվել է ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների հարցում: Հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների համար: Գնահատվել է ուսանողների **100%-ը**:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 1-ին կիսամյակի արդյունքներով ուսանողների վերջնական ՄՈԳ-ի միջին գնահատականը կազմել է **18.41**, իսկ արտաքին շահակիցների գնահատման միջինը՝ **4.7**:





Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար. արտաքին շահակիցները նշել են.

– զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների վերաբերյալ խորը գիտելիքների իմացություն,

– կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի մեթոդների իմացություն,

– երեխաների հետ աշխատելու հմտություններ:

Մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 5: Գործընթացը բարելավելու համար առաջարկվել է կազմակերպել ուսանողների համար ընթացիկ այցեր պրակտիկայի ժամկետից դուրս, ողջ կիսամյակի ընթացքում:

Հարցման արդյունքները պրակտիկայի բաժնի կողմից տրամադրվել են Մանկավարժության և հոգեբանության ամբիոնին՝ հետագա աշխատանքներում նկատի առնելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների անցկացման ընթացքը և 2-րդ կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Անդրադառնալով 1-ին ընթացիկ հարցին՝ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հրաման № 6§2-ի համաձայն՝ հեռակա ուսուցման «Պատմություն» մասնագիտության «Պատմություն» բակալավրի կրթական ծրագրի տեսական դասընթացը 2021թ.-ին ավարտած Հայկ Հայկազի Հարությունյանին թույլատրվել է 2022թ. մասնակցել նույն մասնագիտության (բակալավարի կրթական ծրագրի) հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորմանը՝ ավարտական աշխատանքը վերահանձնելու համար, և այդ կապակցությամբ

առաջարկվեց ավարտական աշխատանքի գիտական ղեկավար նշանակել դասախոս Վ. Պողոսյանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հաստատել «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի վերոհիշյալ առաջարկը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան